ՊՐՈՖԵՍՈՐ ԱՇՈՏ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Անուններ կան, որոնք առավել արժևորվում և իմաստավորվում են իրենց երկրային կյանքի ավարտից հետո, երբ ժամանակը ամեն բան իր տեղն է դնում: Առօրյայում խիստ համեստ ու մատչելի, հասարակ ու քչով գոհացող նման մարդկանց մասին ասում են ժողովրդական: Հիրավի, լեռան մեծությունը



երևում է հեռավորությունից: Այս խոսքերը լիովին կարող են վերաբերել պրոֆեսոր, ականավոր լեզվաբան Աշոտ Սուքիասյանին, որի ծննդյան 90-ամյակը լրանում է այս տարի:

Աշոտ Մուրադի Սուքիասյանը ծնվել է 1922 թ. օգոստոսի 18-ին, Թիֆլիսում, Արևմտահայաստանից գաղթած և եղեռնի զարհուրանքները տեսած ընտանիքում: Հայրը՝ խլաթցի Մուրադը, որ Սերոբ փաշայի հայրենակիցն ու անձամբ ճանաչողն էր, կռվել էր Անդրանիկի և այլ հայ զորավարների զորամասերում, մայրը մանազկերտցի համեստ ու պատվարժան մի հայուհի էր: Նրանց ճակատագիրը կրկնում է արևմտահայ հայրենակորույս այն բոլոր հայորդիների անցած ուղին, որոնք ապաստանել էին Կովկասում:

1940 թ. գերազանց գնահատականներով ավարտելով Թբիլիսիի 86-րդ հայկական միջնակարգ դպրոցը՝ Ա. Սուքիասյանն ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը՝ իբրև համակուրսեցիներ ունենալով Պ. Սևակին. Վ. Դավթյանին, Ս. Աղաբաբյանին, Վ. Մեսրոպյանին և այլոց: Սակայն նրան երկար վիճակված չէր վայելել ուսանողական կյանքի հաճույքները: Պայթում է Հայրենական մեծ պատերազմը, և Ա. Սուքիասյանը իր բազմաթիվ հասակակիցների հետ զորակոչվում է բանակ, մասնակցում կովկասյան ռազմաճակատի ահեղ մարտերին, 1942 թ. փետրվարին ծանր վիրավորվում է և որպես հաշմանդամ՝ զորացրվում է բանակից: Ծանր ու երկարատև բուժման կուրսից հետո՝ 1945 թվականին, նա ուսումը շարունակում է համալսարանում և 1948-ին ավարտում է այն:

1949 թ. հունիսի 14-ին նրա ընտանիքը, իբրև քաղաքականապես անբարեհույս, բազմաթիվ այլ անմեղ մարդկանց հետ աքսորվում է Ալթայի երկրամասի խորքերը: Ա. Սուքիասյանի հուսահատ դիմումները ղեկավար մարմիններին զարմանալիորեն արդյունք են տալիս և նրա դիմում-բողոքների հիման վրա հաջողվում է մի քանի ամիս անց աքսորից ետ վերադարձնել ընտանիքը, որը հրաշքի էր նման, քանի որ նման բաները հազվագյուտ երևույթ էին խորհրդային պետության իրավաքաղաքական պրակտիկայում:

1950 թ. Ա. Սուքիասյանն ընդունվում է ԳԱ լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան «Հայ բառարանագիտություն» մասնագիտությամբ՝ աշակերտելով մեծն Հր. Աճառյանին և դառնալով նրա վերջին ու սիրելի ասպիրանտը: 1954-ին նա պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Խորհրդահայ բառարանագրությունը» թեմայով և նույն տարին աշխատանքի է անցնում Լեզվի ինստիտուտում: Սկսվում է նրա կյանքի բեղուն գիտական շրջանը: Նա ձեռնամուխ է լինում հայոց լեզվի հոմանիշների բառարանի կազմման տքնաջան աշխատանքին, որն ավարտվում և տպագրվում է 1967 թվականին՝ դառնալով հեղինակի գիտական գործունեության գլուխգործոցը: Այս, հիրավի, կոթողային աշխատանքն ընդգրկում է հայերենի տարբեր փուլերին ու գործառական տարբերակներին պատկանող շուրջ 83 հազար բառ ու դարձվածքային միավոր, որի երկրորդ՝ լրամշակված հրատարակությունը տարիներ հետո՝ 2003 թվականին, արժանացավ ՀՀ նախագահի մրցանակին: Այնուհետև իր իսկ կազմած բառարանի հարուստ փաստական նյութի հիման վրա տեսական հետազոտության է ենթարկում հոմանշային ողջ համակարգը, որի արդյունքը լինում է «Հոմանիշները ժամանակակից հայերենում» ստվարածավալ մենագրությունը, որի հիման վրա 1971 թ. նա պաշտպանում է դոկտորական ատենախոսություն:

1960-ականների վերջերից նա աշխատանքի է անցնում Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնում սկզբում դոցենտի, ապա՝ պրոֆեսորի պաշտոնում: Այնուհետև՝ շուրջ 15 տարի, նա վարել է հայոց լեզվի ամբիոնի վարիչի պաշտոնը: Այդ շրջանը սերտորեն առնչվում է ամբիոնում կատարված մեծ վերափոխումների, ստեղծագործական ձեռքբերումների և ամենակարևորը՝ բուհական ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի կազմման և հրատարակության հետ: Այդ ժամանակահատվածում լույս են տեսել «Ժամանակակից հայոց լեզու» վերտառությամբ Ա. Սուքիասյանի «Հնչյունաբանություն, բառագիտություն», Մ. Ասատրյանի «Քերականություն», Գ. Գարեգինյանի «Շարահյուսություն» և բազմաթիվ արժեքավոր այլ հրատարակություններ, որոնք դարձան ուսանողների սիրելի գրքերը և ունեցան մի քանի վերահրատարակություններ:

Այս ամենից զատ՝ Ա. Սուքիասյանը գործուն մասնակցություն է ունեցել նաև արտահամալսարանական գիտական կյանքին. Ս. Գալստյանի հետ կազմել է շուրջ 25 հազար միավոր պարունակող «Արդի հայերենի դարձվածաբանական բառարանը», իր գործուն մասնակցությունն է բերել հայոց լեզվի ակադեմիական քառահատոր բառարանի կազմման աշխատանքներին: Նա, անկասկած, ամենահայտնի բառարանագիրն էր նորագույն լեզվաբանների մեջ:

Կյանքում Ա. Սուքիասյանը խիստ համեստ և կենսուրախ մարդ էր՝ հումորի մեծ զգացումով: Նույնիսկ կյանքի վերջին տարիներին նրան բաժին հասած ընտանեկան անդառնալի կորուստները չկոտրեցին նրան, չընկճեցին ոգու արիությունը: Նա սերունդների հիշողության մեջ մնաց իբրև ուղղամիտ և անբասիր վարքի տեր ականավոր գիտնական:

ՌՈՒԲԵՆ ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ